

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

\_\_\_\_\_ Տ. Դավթյան

18 նոյեմբերի 2009 թ. N 1069-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

\_\_\_\_\_ Գ. Խաչատրյան

28 հոկտեմբերի 2009 թ. N 8

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ  
ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (21.08.2008թ., ՀՕ-146-Ն) և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (30.12.2008թ., ՀՕ-246-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքներն ուժի մեջ մտնելուց հետո որոշակի անհամապատասխանություն է առաջացել «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ և 26-րդ հոդվածների առանձին դրույթների միջև: «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 23-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի 3 հոդվածին համապատասխան՝ ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող չհամարվելու օրացուցային տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գումարի) ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ու վերագրվում է արտադրության և շրջանառության ծախսերին,

2) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները (այդ թվում նաև՝ օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված՝ ներմուծման պահին վճարման ժամկետը հետաձգված ԱԱՀ-ի գումարները) հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն՝ ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից,

3) 26-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության համաձայն՝ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերում՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերող ձեռքբերումների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման և պետք է միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման գնին կամ արտադրության ու շրջանառության ծախսերին:

Քանի որ օրենքի 23-րդ հոդվածում նշված ԱԱՀ-ի դեբետային մնացորդում կարող են ներառվել այնպիսի ձեռքբերումների մասով հարկային հաշիվներում (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում իրականացվելիք (իրականացված) գործարքներին՝ հաշվանցվող գումարների կրկնակի նվազեցումը բացառելու նպատակով պաշտոնապես պարզաբանում ենք.

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերող ձեռքբերումների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպման դրույթը կիրառելի չէ այն անձանց նկատմամբ, որոնք օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան, տվյալ օրացուցային տարում դադարում են համարվել ԱԱՀ վճարող: